



Հեղինակ Վլատիմիր Պետրոսյան, Պատմական գիտությունների դոկտոր

✘ «Մուղնի» հրատարակչությունը 2008-ի մայիսին լույս է ընծայել «Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան» խորագրով Ժ2 գիրքը՝ «Վազգեն Ա Պալճեան Ամենայն հայոց կաթողիկոս (1955-1994)» փաստաթղթերի եւ նյութերի ժողովածուն 1375 էջով: Այս հատորն ընդգրկում է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի 39-ամյա գահակալության 1955-1965 թթ. տասնամյա գործունեության փաստաթղթերն ու նյութերը, որոնք սերտորեն առնչվում են ներազգային եւ միջազգային իրադարձություններին:

Փաստաթղթերի եւ նյութերի այդ ծավալուն ժողովածուն կազմել ու խմբագրել է ծանոթ պատմաբան Գեւորգ Յազըճյանը: Ժողովածուն լույս է տեսել «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի ղեկավար Չավեն Եկավյանի եռանդուն օժանդակությամբ եւ «Մուղնի» հրատարակչության տնօրեն Ռուզան Պետրոսյանի ջանքերով:

Հեղինակ Վլատիմիր Պետրոսյան, Պատմական գիտությունների դոկտոր

✘ «Մուղնի» հրատարակչությունը 2008-ի մայիսին լույս է ընծայել «Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան» խորագրով Ժ2 գիրքը՝ «Վազգեն Ա Պալճեան Ամենայն հայոց կաթողիկոս (1955-1994)» փաստաթղթերի եւ նյութերի ժողովածուն 1375 էջով: Այս հատորն ընդգրկում է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի 39-ամյա գահակալության 1955-1965 թթ. տասնամյա գործունեության փաստաթղթերն ու նյութերը, որոնք սերտորեն առնչվում են ներազգային եւ միջազգային իրադարձություններին:

Փաստաթղթերի եւ նյութերի այդ ծավալուն ժողովածուն կազմել ու խմբագրել է ծանոթ պատմաբան Գեւորգ Յազըճյանը: Ժողովածուն լույս է տեսել «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայկական բաժանմունքի ղեկավար Չավեն Եկավյանի եռանդուն օժանդակությամբ եւ «Մուղնի» հրատարակչության տնօրեն Ռուզան Պետրոսյանի ջանքերով:

1955-ի դեկտեմբերի 1-ին, ընտրվելուց երկու ամիս անց, կաթողիկոսն իր առաջին կոնդակում ամենայն պատասխանատվությամբ հռչակեց իր առաքելությունը՝ առաջնորդել աշխարհացրիվ հայությանը դեպի միասնություն, նպաստել ազգապահպանմանը:

Գրախոսվող հատորում մեծ տեղ է հատկացված այն փաստաթղթերին, որոնք ընթերցողի առջեւ բացում են Հայ եկեղեցին պառակտելու, նրա միասնությունը խաթարելու պատմության ծալքերը եւ ցույց են տրվում Վազգեն Առաջինի գործադրած ջանքերը եկեղեցու միասնությունը վերականգնելու գործում:





դեկտեմբերի 20-ին հրապարակած կոնդակով ընդգծեց, թե «պիտի գայ օր մը, երբ այսօրուան հերձուածի հեղինակները, եթէ կամենան իսկ, պիտի չկարողանան սրբագրել իրենց ազգաքանդ սխալը: Անոնք ենթակայ պիտի դառնան մեր եկեղեցիի եւ ազգի նզովքին»:

Իհարկեւ, Հայոց եկեղեցու միասնությունը պառակտող ուժերը գիտակցում էին իրենց արարքի ամբողջ էությունը եւ փորձում էին դրան տալ եկեղեցական գունավորում: Բայց դա նրանց չհաջողվեց:

Այդ պառակտիչների փորձերին Վազգեն Առաջինը տվել է սպառնիչ գնահատական, գրելով հետեւյալը. «Էջմիածին-Անթիլիաս տազնապը փաստօրէն եկեղեցական տազնապ չէ, ոչ իսկ եկեղեցական-վարչական, այլ քաղաքական է, աւելի ճիշտ կուսակցական: Որովհետեւ կայ ծանօթ կուսակցութիւնը, որ իր ազդեցութիւնը պարտադրած է Կիլիկեան աթոռին՝ եկեղեցւոյ կազմակերպութեան միջոցաւ իր տիրապետութիւնը տարածելու Սփիւռքի վրայ: Այս կուսակցութիւնը իր այս դիրքորոշումը պարտադրած է Կիլիկեան աթոռին: Եւ իր քաղաքական նպատակներ կը փորձէ կենսագործել, մեր եկեղեցւոյ մարմնի մէկ մասը իր ձեռքերուն առած՝ Մայր եկեղեցին պառակտելով Սփիւռքի մէջ»:

Առաջ անցնելով, ուզում եմ այստեղ հիշատակել դաշնակցության նորօրյա գաղափարախոսներից մեկի՝ ոմն Ռուբինա Փիրումյանի «Հայկական հարցի պատմություն» հավակնոտ դասագրքում (որը չգիտես ում կամքով պարտադրվել է Հայաստանի Հանրապետության դպրոցների 9-րդ դասարանների աշակերտներին) տեղ գտած հետեւյալ կեղծիքը:

Խորհրդային իշխանությանը մեղադրելով Էջմիածնի Մայր աթոռը իր հսկողության տակ պահելու մեջ, Ռ. Փիրումյանը գրել է. «Հայկական Սփյուռքում եւս փորձում էին եկեղեցիների միջոցով համայնքները խորհրդային ազդեցության տակ առնել: Սփյուռքի եկեղեցիներում ծառայելու համար հաճախ գործուղվում էին հոգեւորականի տարազով համայնավար գործիչներ: Դաշնակցությունը պայքարում էր այդ քաղաքականության դեմ ու փորձում էր Սփյուռքը պահել անկախ, զուտ ազգային սկզբունքների վրա հիմնված: Եվ այստեղից էլ Էջմիածին-Անթիլիաս հակամարտությունը»:

Այստեղ մի քանի հարց է առաջանում: Եթե Դաշնակցությանը հայտնի էին համայնավար գործակալները, ապա մի՞թե դժվար էր նրանց մերկացնել եւ թույլ չտալ ազատորեն գործել: Մի՞թե դաշնակցությունն ուրիշ ելք չունէր Սփյուռքն ազգային սկզբունքների վրա պահելու համար եւ հարկադրված եղավ նրան փրկելու նպատակով անջատել Էջմիածնի «կոմունիստական» Մայր աթոռից եւ ենթարկել իրեն:

Նորօրյա այդ գաղափարախոսի պնդումը որքան անհեթեթ, այնքան էլ բացահայտ զրպարտություն է, որոնց միջոցով նա ձգտում է Դաշնակցությանը փրկել Հայոց եկեղեցու միասնությունը քայքայելու եւ պառակտելու պատասխանատվությունից:



ջանքերին: Այդ փաստաթղթերը, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ, ընթերցողի առջեւ բացում են այն բոլոր բացահայտ ու թաքուն խոչընդոտների ծալքերը, որոնք ցավոք, մինչեւ օրս էլ շարունակում են գոյություն ունենալ:

Այդ փաստաթղթերի միջոցով մեր առջեւ վեր է խոյանում հայ ժողովրդի միասնության համար անխնջ պայքարող, ազգային-հոգեւորական մեծ գործիչ Վազգեն Առաջինի կերպարը: Առանձնակի կարեւորություն է ներկայացնում Վազգեն Առաջինի 1964-ի օգոստոսի 17-ի կոնդակը՝ «նվիրուած Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին արեւմտահայ ժողովրդի նահատակութեան», որով 1965 թվականը հռչակվում էր սուգի եւ աղօթքի տարի Հայ եկեղեցու եւ ժողովրդի համար»:

Այս կոնդակից հետո Վազգեն Առաջինն իր ջանքերն ուղղեց Սուրբ Էջմիածնում եւ բազմաթիվ հայ գաղութներում Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնելու նպատակով հուշարձանների կառուցմանը: Փաստորեն Վազգեն Առաջինի այս կոնդակով դրվեց պետականորեն Եղեռնի 50-ամյակը նշելու եւ Երեւանի Ծիծեռնակաբերդի բարձունքում հուշակոթող կառուցելու սկիզբը:

Փաստաթղթերի մի զգալի հատված նվիրված է Վազգեն Առաջինի եկեղեցաշինական գործունեությանը: Դրանց միջոցով բացահայտվում է Ամենայն հայոց հայրապետի եռանդուն գործունեությունը միջազգային ասպարեզում Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հեղինակությունը բարձր պահելու համար: Այդ մասին է վկայում Հռոմի պապի, Մոսկվայի եւ Համայն Ռուսիայի պատրիարքի, Համայն Անգլիայի առաջնորդ, Քենտրբերիի արքեպիսկոպոսի եւ այլոց հետ կաթողիկոսի նամակագրությունը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Վազգեն Առաջինի 1965-ի հունիսի 4-ի կոնդակը եկեղեցիների միության մասին: «Այս երկու հազար տարիներու ընթացքին,- գրել է կաթողիկոսը,- քրիստոնեութիւնը, եկեղեցիները յաճախ կուրծք տուած են արտաքին ալեկոծումներու եւ ներքին հակամարտութիւններու եւ պառակտումներու, եւ երբեմն նոյնիսկ թշնամական փոխադարձ գործողութիւններու, սակայն, Աստուծոյ ողորմութեամբ, անոնք կարողացել են հասնիլ խաղաղութեան ափին, շարունակելով իրենց սրբազան առաքելութիւնը, ամէն մէկը իրեն սահմանուած հօտին մէջ»:

Այնուհետեւ կաթողիկոսն ընդգծում է, որ «Հայաստանեաց առաքելական Սուրբ Եկեղեցին, դաւանաբանական հարցերու նկատմամբ իր մտածելակերպով ու բանաձեւումներով թեւեւ կը մնայ անշեղ ու հաստատ իր աւանդական ուղղափառ դիրքերուն վրայ, սակայն, ինչպէս անցեալի մէջ, այսօր ալ կ'առաջնորդուի «Միութիւն ի կարեւորս եւ ազատութիւն յերկբայականս» հին ու բարերար սկզբունքով: Ուրեմն, յոյժ ցանկալի է, որ քոյր եկեղեցիներու հետ մենք շարունակենք պահպանել ու մշակել իրաւ քրիստոնեական եղբայրական կապեր, Մայր Եկեղեցւոյ եւ մեր լուսաբնակ հայրապետներու ոգիով, եկեղեցիներու միջեւ միութիւնը տեսնելով ի Քրիստոս սիրոյ

մեջ, փոխադարձ ճանաչման ու գնահատման մեջ, սերտ գործակցութեան մեջ»:

Կաթողիկոսը համոզմունք է հայտնում, որ դավանաբանական կամ այլ խնդիրներ արգելք չպետք է լինեն «Եկեղեցիներու սիրալիր յարաբերութեանց ու եղբայրական գործակցութեանց»:

Վազգեն Առաջինը եկեղեցիների միության հաստատումը համարում էր ամբողջ աշխարհում խաղաղության հաստատման ու պահպանման կարևոր երաշխիքներից մեկը եւ եռանդով հանդես էր գալիս խաղաղասեր ուժերի առաջին շարքում, վաստակելով մեծ հեղինակություն:

Ժողովածուն ընթերցողին հնարավորություն է տալիս ծանոթանալու հայապահպանման գործում Վազգեն Առաջինի եռանդուն աշխատանքին, որ նա անխոնջ կերպով առաջ է տարել դեպի սփյուռք կատարած բազմաթիվ այցելությունների ընթացքում:

Առաջին անգամ հրապարակված փաստաթղթերն ընթերցողի առջեւ բացահայտում են պետական մտածողություն ունեցող Վազգեն Առաջինի ծավալած եռանդուն գործունեությունը: Դրա վառ ապացույցն է Խորհրդային Հայաստանի ղեկավար մարմինների հետ Վազգեն Առաջինի վարած գրագրությունը կարեւորություն ունեցող ազգային-մշակութային բնույթի զանազան խնդիրների շուրջ:

Անհրաժեշտ եմ համարում հատկապես ընդգծել, որ Վազգեն Առաջինի գործունեության հաջողությունը մեծապես պայմանավորված էր Խորհրդային Հայաստանի պետական մարմինների հետ նրա վարած խելացի ու մտածված հարաբերություններով եւ դրանց շնորհիվ հաստատված վստահության մթնոլորտով:

Ժողովածուի մեջ զգալի տեղ է հատկացվել Վազգեն Առաջինի գահակալության տասնամյակը նշելու հետ կապված նյութերին, որոնք ոչ միայն կարդացվում են հետաքրքրությամբ, այլեւ ընթերցողի առջեւ բացում են հայ ժողովրդի արժանավոր գավակի բազմաբնույթ ու բազմաբովանդակ գործունեության բոլոր կողմերը:

Գրախոսվող ծավալուն հատորը արժանի հուշարձան է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվանն ու հիշատակին:

Ավարտելով սույն համառոտ գրախոսականը, հարկ եմ համարում նշել, որ հրապարակված փաստաթղթերի ժողովածուն ունի պատմագիտական մեծ արժեք:



